

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արձավիրի մարզի Մարգարա համայնքի գյուղապետարանի 2016թ-ի
հունվարի 1-ից մինչև 2016թ-ի դեկտեմբերի 31-ը ընկած
ժամանակահատվածում կատարած աշխատանքների վերաբերյալ

2015-ի դեկտեմբեր ամսին Մարգարայի գյուղապետարանը կազմել է
գյուղապետարանի 2016թ-ի բյուջեի նախագիծը և ներկայացրել է ավագանու
քննարկմանը: Քննարկումից հետո այն հաստատվել է ավագանու կողմից,
որով և առաջնորդվում են:

2016թ-ի բյուջեն կազմում է 29027,2.0 հազար դրամ:

Ներկայումս նախկին տարիների և ընթացիկ տարվա աշխատավարձի ու
սոց վճարների պարտքեր չունենք:

2016թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ համայնքի բյուջե է մուտքագրվել
26766.9 հազար դրամ, այդ թվում՝

1. հողի հարկ 2310,9 հազար դրամ 75%
2. գույքահարկ 1180,0 հազար դրամ 85%
3. վարձակալական հողի հարկ 1003,8 հազար դրամ 80%
4. դոտացիա 217621,9 հազար դրամ 100%
5. Այլ մուտքեր 3080,0 հազար դրամ
6. Տեղական տուրք 23,9 հազար դրամ 30%:

2016 թ-ին ծախսվել է 33939,5 հազար դրամ, այդ թվում՝

1. Աշխատավարձ _____ 12735,1 հազար դրամ
2. Սոց վճար _____ հազար դրամ
3. Դոտացիայի/Նախակրթարան հազար դրամ
4. Սոցիալական ծախսեր 2140,0 հազար դրամ
5. Ֆոնդային բյուջեից այլ ծախսեր 4282,4 հազար դրամ
6. Այլ ծառայություններ 10017,7 հազար դրամ

2016թ-ի տարեվերջին բյուջեյի ընթացիկ հաշիվներում ունենք 100 հազար
դրամ գումար:

Տարվա ընթացքում գյուղապետարանը անցկացրել է 18 ավագանու նիստ 51 որոշումով, համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է 23 որոշում և 6 կարգադրություն, մուտքագրվել է 102 գրություն, ելք է արվել 124 գրություն՝ 2016թ-ին կատարվել են ներքոհիշյալ աշխատանքները՝

1. Ցուցաբերվել է 2140,0/Երկու միլիոն հարյուր քառասուն հազար/ դրամ սոցալական օգնություն համայնքի անապահով բնակիչներին:
2. «Մերձափնյա» ՁՕԸ-ին աջակցություն է ցուցաբերվել ջրատարների մաքրման և ջրի վարձի հավաքագրման աշխատանքներին:
3. Խմելաջրի ցանցի կառուցման համար տրամադրվել է 1800,0/մեկ միլիոն ութ հարյուր հազար/դրամ:
4. Հաւնայնքում գործարկվել են խորքային հորեր ոռոգման սեզոնին համապատասխան ոռոգման ջրով ապահովվելու համար:
5. Վերջին զանգի կապակցությամբ ֆինանսական օգնություն է ցուցաբերվել՝ 100,0 /հարյուր հազար/ դրամ, 2016թ-ի շրջանավարտներին:
6. Մարզարայի գյուղապետարանը շաբաթական մեկ անգամ կազմակերպում է աղբահանման, ճանապարհների բարեկարգման, ավագապատման աշխատանքներ:
7. 2016թ-ի գարնանային զորակոչի և զորահավաքի ժամանակ Մարզարա համայնքի կողմից աջակցություն է ցուցաբերվել զորակոչի տարիքի բոլոր զինակոչիկներին, Արմավիրի Ջին-կոմիսարիատ ներկայացնելու համար:
8. Պարբերաբար, գյուղապետարանի կողմից, օգնություն է ցուցաբերվել համայնքի այն բնակիչներին, որոնց մոտ խնդիրներ են առաջացել փաստաթղթերի ձևակերպման և նոր փաստաթղթերի ձեռք բերման համար:
9. Ըթացքի մեջ է համայնքում խմելաջրի ցանցի կառուցումը:
Հրատապ խնդիր է նաև համարվում մշակույթի տան վերանորոգումը.

Մարզարա համայնքի



Handwritten signature

/ Խ. Ասատրյան /

<< 19 >> հունվարի 2017 թ

գ. Մարզարա